Արձանագրություն

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհրդի 2023 թ. հունիսի 27-ի թիվ 7 նիստի

Խորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանը ներկաներին տեղեկացրեց, որ գիտական խորհրդի 20 անդամներից ներկա են 19-ը, քվորումն ապահովված է, և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Խորհուրդը բաց քվեարկությամբ (միաձայն) հաստատեց օրակարգը, որում ներառված էին հետևյալ հարցերը.

Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչի ընտրություն
Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչի ընտրություն:

ԼՍԵՑԻՆ. – Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչի ընտրության հարցը: Նիստը նախագահող Ն. Մարտիրոսյանը ասաց, որ ամբիոնի վարիչի տեղի համար դիմել է Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի գործող վարիչ բ.գ.դ., պրոֆեսոր Դ. Վ. Պետրոսյանը: Գործում առկա են ԵՊՀ մանդատային հանձնաժողովի համաձայնությունը, ամբիոնի նիստի քաղվածքը՝ դրական եզրակացությամբ, և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը: Այնուհետև Ն. Մարտիրոսյանը, ընթացակարգի համաձայն, խոսքը փոխանցեց մրցութային հանձնաժողովի նախագահ Մ. Կարապետյանին՝ հանգամանորեն ներկայացնելու թեկնածուի տվյալները, ամբիոնի և մրցութային հանձնաժողովի կարծիքները: Նիստը նախագահող Ն. Մարտիրոսյանը առաջարկեց ծրագրային ելույթի համար սահմանել մինչև 20 րոպե, իսկ ելույթների համար՝ մինչև 5 րոպե ժամանակ: Գիտխորհրդի անդամները բաց քվեարկությամբ (միաձայն) համաձայնեցին: Ծրագրային ելույթով հանդես եկավ Դ. Պետրոսյանը: Ելույթից հետո նախագահողը դիմեց ներկաներին, թե ինչ հարցեր ունեն: Խորհրդի որևէ անդամ հարց չուներ: Ելույթներ նույնպես չեղան:

Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ Դ. Պետրոսյանը ունի նաև լրացուցիչ ելույթի հնարավորություն: Թեկնածուն շնորհակալություն հայտնեց:

Այնուհետև նախագահողը գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց փակ, գաղտնի քվեարկության կարգը, ապա առաջարկեց փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներից ընտրել երեք հոգուց կազմված

հաշվիչ հանձնաժողով: Առաջարկվեցին գիտխորհրդի անդամներ Ա. Մենեմշյանի, Ա. Մարտիրոսյանի և Ա. Ավետիսյանի թեկնածությունները: Այլ առաջարկներ չեղան: Նախագահողն առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը: Գիտական խորհուրդը քվեարկեց միաձայն: Անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն, որի ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովը ամփոփեց քվեարկության արդյունքները և կազմեց հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

Այնուհետև հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Մենեմշյանը հրապարակեց քվեարկության արդյունքները՝ տեղեկացնելով, որ նիստին ներկա 19 անդամներից քվեարկությանը մասնակցել է 18-ը: Բաժանվել է 18 քվեաթերթիկ, քվեատուփում առկա է եղել 18 քվեաթերթիկ: Ձայները բաշխվել են հետևյալ կերպ. կողմ՝ 16, դեմ՝ 2: Նիստի նախագահը առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները: Խորհուրդը միաձայն կողմ քվեարկեց:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաշվի առնելով փակ, գաղտնի քվեարկության արդյունքները, բ.գ.դ., պրոֆ. Դ. Վ. Պետրոսյանին համարել ընտրված Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչի պաշտոնում:

ԼՍԵՑԻՆ. – Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչի ընտրության հարցը: Նիստը նախագահող Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ դիմել է երկու թեկնածու՝ բ.գ.թ., դոցենտ Ա. Շ. Ավետիսյանը և բ.գ.թ., դոցենտ Ն. Է. Վարդանյանը: Այնուհետև մրցութային հանձնաժողովի նախագահին առաջարկվեց ներկայացնել թեկնածուների տվյալները, ամբիոնի և մրցութային հանձնաժողովի կարծիքները: Ապա նախագահողը առաջարկեց թեկնածուներին ծրագրային ելույթների համար տրամադրել մինչև 20 րոպե: Գիտխորհուրդը միաձայն բաց քվեարկությամբ համաձայնեց: Ծրագրային ելույթի համար ձայնը տրվեց ամբիոնի վարիչի թեկնածու Ա. Ավետիսյանին: Ելույթից հետո նախագահողի առաջարկությամբ խորհրդի անդամները հարցերով դիմեցին թեկնածուին: Ելույթներ չեղան: Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ Ա. Ավետիսյանը ունի նաև լրացուցիչ ելույթի հնարավորություն: Թեկնածուն շնորհակալություն հայտնեց և առաջարկեց քվեարկել խղճի մտոք:

Այնուհետև ծրագրային ելույթի համար ձայնը տրվեց ամբիոնի վարիչի թեկնածու Ն. Վարդանյանին: Ելույթից հետո նախագահողն առաջարկեց հարցեր ուղղել թեկնածուին: Ն. Վարդանյանը պատասխանեց հարցերին: Ելույթներ չեղան: Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ Ն. Վարդանյանը ունի նաև լրացուցիչ ելույթի հնարավորություն: Թեկնածուն շնորհակալություն հայտնեց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեկնածուներից որևէ մեկը ինքնաբացարկ չհայտնեց, նրանց անուն-ազգանունները գրանցվեցին քվեաթերթիկում: Նախագահողը ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց փակ, գաղտնի քվեարկության կարգը և առաջարկեց հաշվիչ հանձնաժողովին կազմակերպել քվեարկությունը: Անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն: Արդյունքներն ամփոփելուց հետո հանձնաժողովի նախագահ Ա. Մեհեմշյանը հրապարակեց դրանք: Նա տեղեկացրեց, որ նիստին ներկա 19 անդամներից քվեարկությանը մասնակցել է 18-ը: Բաժանվել է 18 քվեաթերթիկ, քվեատուփում առկա է եղել 18 քվեաթերթիկ: Ձայները բաշխվել են հետևյալ կերպ. Աստղիկ Ավետիսյան՝ կողմ՝ 3, դեմ՝ 15, Նանե Վարդանյան՝ կողմ 13, դեմ՝ 5:

Նիստի նախագահը առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները: Խորհուրդը միաձայն կողմ քվեարկեց:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաշվի առնելով փակ, գաղտնի քվեարկության արդյունքները, բ.գ.թ., դոցենտ Ն. Է. Վարդանյանին համարել ընտրված Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչի պաշտոնում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՄԱՐԳՍՅԱՆ